

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ. ՓԱՍՏԵՐ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ***

ՀՏԴ 336.1

DOI: 10.52063/25792652-2024.3.22-195

ԼՈՒՍՅԱ ԳԱԼՈՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի ընդհանուր տնտեսագիտության և բնագիտական առարկաների ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,

ք. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն

lusya.galovan@gmail.com

ORCID: 0009-0007-3301-6673

Հոդվածի նպատակն է գնահատել Գյումրի համայնքի 2023 թ. տարեկան ֆինանսական պլանի կատարման վիճակը և բացահայտել առկա խնդիրները:

Հոդվածում առաջադրված խնդիրները հիմնականում վերաբերում են բյուջեի պլանային, ճշտված ցուցանիշների համեմատական վերլուծությանը, ինչպես նաև դրանց կատարողական ցուցանիշների գնահատմանը, ինչը հնարավորություն է տվել բացահայտելու առկա խնդիրները և դրանց հիման վրա եզրահանգումներ կատարելու:

Նշված վերլուծություններն ու գնահատումները իրականացնելու համար հիմնականում կիրառվել են վերլուծության և համեմատության մեթոդները:

Այսպիսով՝ ուսումնասիրությունը բացահայտում է՝ թե՛ եկամտային և թե՛ ծախսային հոդվածների գծով կան էական թերակատարումներ, ցուցանիշի փաստացի շեղումներ ունեցող բազմաթիվ ծրագրեր: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ որոշ դեպքերում շեղման չափը ցուցանիշի թիրախային արժեքի գերակշիռ մասն է:

Հետևաբար, լրջագույն անելիքներ կան թե՛ զարգացման ծրագրերում խնդիրների, նպատակների և թիրախների սահմանման և գնահատման ուղղությամբ, թե՛ դրանց կատարման ապահովման ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորվում են բյուջետային պլանավորման հիմնավորված, փաստարկված իրականացումը, մասնավորապես ցուցանիշների, դրանց նպատակային արժեքների սահմանման առումով, քանի որ կատարողականի նույնիսկ բարձր ցուցանիշները հաճախ դեռևս չեն երաշխավորում սահմանված նպատակների ձեռքբերում և խնդիրների լուծում, եթե ճշգրիտ սահմանված չեն դրանց հաշվարկման և գնահատման ցուցանիշները: Այս խնդիրների արձանագրումը և դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը չափազանց կարևոր է առավել գրագետ, նպատակային և արդյունքային պլանավորում և գնահատում իրականացնելու տեսանկյունից:

* Հոդվածը ներկայացվել է 22.07.2024թ., գրախոսվել՝ 15.09.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

Հիմաբառեր՝ համայնքային բյուջե, տարեկան աշխատանքային պլան, համայնքային բյուջեի եկամուտներ, համայնքային բյուջեի ծախսեր, համայնքային բյուջեի պակասուրդ, համայնքային բյուջեի ավելցուկ, բյուջեի կատարողական:

Ներածություն

Համայնքի զարգացման ծրագրերը, ֆինանսական պլանները և դրանց կատարման վիճակը մշտադիտարկելի ու վերլուծելի չափազանց կարևոր են և արժեքավոր դրանցում առկա խնդիրներն ու բացթողումները ուշադրության կենտրոնում պահելու և հանրային վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից: Այս առումով առաջադրված թեման մշտապես արդիական է, քանի որ նմանատիպ վերլուծություններն ու գնահատումները թույլ են տալիս բացահայտելու առկա անհամապատասխանությունները, որոնք կարող են հետևանք լինել կամ ոչ ճշգրիտ պլանավորման, կամ աշխատանքի թերակատարման: Երկու դեպքում էլ պատկան մարմինները առավել մեծ ուշադրության և ջանքերի կարիք ունեն, ինչը պետք է ապահովել նաև նմանատիպ հետազոտությունների, ինչու ոչ, նաև հանրային քննարկումների ու «ճնշումների» արդյունքում:

Վերլուծություն

Առաջադրված խնդիրները համակողմանի քննարկելու և արդյունքները ներկայացնելու համար կարևոր է համայնքի բյուջետային ցուցանիշների տարեկան ճշտված պլանների և վերջիններիս կատարողականների գնահատումն ու վերլուծությունը: Այսպես, Գյումրիի համայնքի 2023 թ. բյուջեի ընդամենը եկամուտների տարեկան ճշտված պլանը շուրջ 6.588 մլրդ. Դրամ է, որից շուրջ 1.262-ը մլրդ. դրամը եղել են հարկերի և տուրքերի գծով մուտքերը, իսկ շուրջ 4.477 մլրդ. դրամը՝ պաշտոնական դրամաշնորհները, այլ եկամուտների գծով մուտքերի տարեկան ճշտված պլանը շուրջ 849 մլն. դրամ է: Համայնքի բյուջեի եկամտատեսակները և դրանց բաշխման տարեկան ճշտված պլաններն ու փաստացի մուտքերն ըստ ֆոնդային և վարչական բյուջեների ներկայացված են աղյուսակ 1-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):

Աղյուսակ 1. («Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)


	Եկամտատեսակները՝ ըստ տարեկան ճշտված պլանի, հզ. դրամ				Եկամտատեսակների գծով փաստացի մուտքերը, 2023 թ., հզ. դրամ			
	Ընդ. եկամ.	Այլ թվում՝			Ընդ. եկամ.	Այլ թվում՝		
		Հարկ. և տուրքեր	Պաշտոն. դրամաշն.	Այլ եկամ.		Հարկ. և տուրքեր	Պաշտոն. դրամաշն.	Այլ եկամ.
Ընդամենը տարեկան ճշտված պլան, 2023 թ., այդ թվում՝	6588356	1262045	4477047	849263	6432652	1238267	4380456	813928
Վարչական բյուջե	4674186	1262045	2589174	822966	4633665	1238267	2588469	806928
Ֆոնդային բյուջե	2261054	-	1887873	373181	1948986		1791986	157000

Հետաքրքրական է հատկապես 2023 թ. ճշտված բյուջեի եկամուտների կատարողականի ցուցանիշները. Ընդամենը եկամուտների կատարողականը կազմել է 97.6%, հարկերի և տուրքերի գծով՝ 98.1%, պաշտոնական դրամաշնորհների գծով՝ 97.8%, իսկ այլ եկամուտների գծով մուտքերի կատարողականը կազմել է 95.8%:

Բյուջեի փաստացի մուտքերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի մուտքերի համեմատականը ներկայացված են

գծապատկեր 1-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024).

Գծապատկեր 1. («Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)



Ինչ վերաբերում է համայնքի բյուջեի ծախսերի վերլուծությունը, ապա այն կատարվել է և՛ գործառնական և՛ տնտեսագիտական դասակարգման տեսանկյուններից: 2023 թ. բյուջեի փաստացի ծախսերն և տարեկան ճշտված պլանները ըստ գործառնական դասակարգման ներկայացված են աղյուսակ 2-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024): Համեմատության համար նշենք, որ ընդամենը փաստացի ծախսերը 2022 թ. կազմել են շուրջ 5.544 մլրդ. դրամ:

Աղյուսակ 2. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)», 2024 թ.)

	Գործառնական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլանը, 2023թ., հզ. դրամ			Գործառնական դասակարգման բյուջետային փաստացի ծախսերը, 2023թ., հզ. դրամ		
	Ընդամենը	Այդ թվում՝		Ընդամենը	Այդ թվում՝	
		Վարչական	Ֆոնդային		Վարչական	Ֆոնդային
Ընդհ. բն. հանր. ծառ.	938027	882078	55949	882136358	856789758	25346600
Պաշտպ.	300000	300000	0	260000	260000	0
Հաս. կարգ, անվտ., դատ. գործ.	0	0	0	0	0	0
Տնտես. հար.	827423	165245	662178	1707096	161066	1546029
Շրջ. միջ. պաշտ.	870950	773805	97145	776800	771504	5296
Բնակ. շին. և կոմ. ծառ.	2285447	343587	1941860	1134808	335770	799038
Առողջապ.	0	0	0	0	0	0
Հանգիստ, մշակ. և կրոն	1402327	1391627	10700	1384208	1382038	2170
Կրթություն	796161	796161	0	756558	756558	0
Սոց. պաշտպ.	39477	39477	0	34047	34047	0
Հիմն. բաժ. չդրամվ. պահ. ֆոնդ.	0	346884	0	0	150000	0


Ինչպես ներկայացված է աղյուսակում, փաստացի ծախսերի գծով առաջին եռյակում են տնտեսական հարաբերությունների, հանգստի, մշակույթի, կրոնի և

բնակարանային շինարարության ու կոմունալ ծառայությունների ուղղությամբ կատարված ծախսերը:

Հատկանշական է, որ 2023 թ. գործառնական դասակարգմամբ ճշտված բյուջեի ծախսերի կատարողականի գնահատումը ակնհայտ է դարձնում, որ կան էական թերակատարումներ:

Բյուջեի փաստացի ծախսերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի ծախսերի համեմատականը ներկայացված են գծագրատվեր 2-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):

Գծագրատվեր 2. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)



Բյուջեի ծախսային մասի դիտարկումները ամբողջացնելու համար կարևոր է նաև այն ներկայացնել տնտեսագիտական դասակարգման տեսանկյունից: Այսպիսով, 2022 թ. փաստացի ընդամենը ծախսերը շուրջ 5.544 մլրդ. դրամ է, որից շուրջ 3.951 մլրդ. դրամը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, շուրջ 1.852 մլրդ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին:

Իսկ 2023 թ. արդեն տնտեսագիտական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլաններն և բյուջետային փաստացի ծախսերը ներկայացված են աղյուսակ 3-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):


Աղյուսակ 3. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)

	Տնտեսագիտական դասակարգման բյուջետային ծախսերի տարեկան ճշտված պլանը, 2023 թ., հզ. դրամ			Տնտեսագիտական դասակարգման բյուջետային փաստացի ծախսերը, 2023 թ., հզ. դրամ		
	Ընդամենը	Այդ թվում՝		Ընդամենը	Այդ թվում՝	
		Վարչական	Ֆոնդային		Վարչական	Ֆոնդային
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	7160115	4739166	2767833	6675916	4448035	2377880
Ընթացիկ ծախսեր	4392282	4739166	0	4298035	4448035	0
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	5221911		5221911	2839367		2839367
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-2454078		-2454078	-461486		-461486
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	7160115	4739166	2767833	6675916	4448035	2377880

Տնտեսագիտական դասակարգմամբ բյուջետային ծախսերի ճշտված բյուջեի կատարողականի ցուցանիշները ևս մտահոգիչ են, մասնավորապես՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի մասով՝ 54.4%: Վերջինս հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների հողվածով նախատեսված ծախսերի թերակատարմամբ, հատկանշվում է շենքերի և շինությունների կառուցման ու կապիտալ նորոգման գծով արձանագրված թերակատարումը (համապատասխանաբար 24,1% և 57,2%), մեքենաների և սարքավորումների գծով թերակատարումը (33,5%), ինչպես նաև այլ հիմնական միջոցների գծով թերակատարումը (աճեցվող ակտիվների ուղղությամբ՝ 64,9% և նախագծահետազոտական ծախսերի ուղղությամբ՝ 75,6%):


Բյուջեի փաստացի ծախսերի համեմատականը 2022-2023 թթ. համար և 2023 թ. ճշտված և 2022 թ. փաստացի ծախսերի համեմատականը ըստ տնտեսագիտական դասակարգման ներկայացված են գծապատկեր 3-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024):

Գծապատկեր 3. («Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23թ.ժամանակահատվածի համար)», 2024թ.)



Ամփոփելով անդրադառնանք նաև բյուջեի պակասուրդի կամ հավելուրդի ցուցանիշների վերլուծությանը. հավելուրդի/պակասուրդի տարեկան ճշտված պլանը շուրջ -571.7 մլն. դրամ է, իսկ փաստացի ցուցանիշը՝ շուրջ 243.2 մլն. դրամ: Տարեկան ճշտված պլանի և փաստացի ցուցանիշների բաշխումը ըստ վարչական և ֆոնդային բյուջեի ներկայացված են գծապատկեր 4-ում (ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի, N39-Ա որոշում 2024).

Գծապատկեր 4. («Հաշվետվություն համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների (02/01/23-31/12/23 թ.ժամանակահատվածի համար)», 2024 թ.)



Ինչ վերաբերում է տարեկան աշխատանքային պլանի ծրագրային վերլուծությանը և գնահատումներին, ապա պետք է փաստել, որ 2023 թ. տարեկան աշխատանքային պլանի դիտարկումների արդյունքում արձանագրվել են առանձին ծրագրերի գծով թե՛ դրական և թե՛ բացասական շեղումներ: Հատկանշական է, որ թիրախային արժեքը չապահովված հիմնական ծրագրերից են գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման, նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպման, համայնքի մշակութային կյանքի կազմակերպման, համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության, համայնքում մարզական կյանքի կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման, համայնքի բնակավայրերի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման, համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովման, պետության պաշտպանության իրականացմանն աջակցության ուղղություններով նախատեսված ծրագրերը: Այս հանգամանքը մտահոգիչ է, քանի որ համայնքային կարևոր նշանակություն և առաջնահերթություն ունեցող ուղղություններում նախատեսված արդյունքները չեն ապահովվել, ինչի արդյունքում արձանագրված խնդիրները մնում են դեռևս ամբողջովին չհաղթահարված և լրացուցիչ բեռ ու դժվարություններ ստեղծում հաջորդ տարիների համար:

Պակաս կարևոր չեն նաև դրական շեղում (թիրախային արժեքի գերազանցում) արձանագրած ուղղությունների դիտարկումները, քանի որ որոշ դեպքերում այդ գերազանցումը կարելի է բնութագրել որպես բացասական երևույթ՝ կապված, օրինակ, սխալ պլանավորման հետ: Հետաքրքրական է այն փաստը, որ գրեթե բոլոր

գերազանցումները արձանագրվել են հատկապես ծախսային գերակատարում ենթադրող հոդվածներում (մասնապարտեզների շենքերի ընթացիկ նորոգում, գույքի ձեռքբերում, համայնքապետարանի կազմակերպված մշակութային միջոցառումների թիվ, այցելություններ այլ մշակութային օջախներ, համերգների, փառատոների կազմակերպում, մարզական միջոցառումների կազմակերպում, մասնապատանեկան մարզադպրոցների գործունեության ապահովում, մարզադպրոցների ջեռուցման և ջերմամեկուսացման համակարգերի ստեղծում, մարզադպրոցների շենքերի մասնակի նորոգում, մարզագույքի ձեռքբերում և այլն): Շինարարական, ջեռուցման և ջերմամեկուսացման աշխատանքների ուղղությամբ արձանագրված գերակատարումները հիմնականում մեկնաբանվել են աշխատանքների ընթացքում հավելյալ աշխատանքների առաջացման պատճառով, իսկ մարզամշակութային միջոցառումների թվի աճը՝ նոր համագործակցությունների, հրավերների թվի աճով: Իհարկե, այս հանգամանքը Էական դժվարություններ կառաջացնի բյուջեի կատարման տեսանկյունից արդեն իսկ պլանավորված բյուջեից լրացուցիչ միջոցներ հատկացնելու առումով: Բացի այդ, գերակատարում արձանագրած ուղղություններում բավական շատ էին նաև տարաբնույթ միջոցառումների կազմակերպման համար հավելյալ տրամադրված միջոցները, իսկ այդ միջոցառումների՝ համայնքի բնակչության համար առաջնահերթություն և կարևոր խնդիրներ լուծելու կարողություն ունենալու հանգամանքը, բնականաբար, խիստ կասկածելի է:

Եզրահանգումներ

Այսպիսով՝ իրականացված դիտարկումների արդյունքում բացահայտվեցին խնդիրներ, որոնք հետևանք են նախ՝ զարգացման առանձին ծրագրերում ձևակերպված նպատակի, խնդրի, անմիջական արդյունքների, ինչպես նաև ելակետային և թիրախային արժեքների որոշման և սահմանման անհամապատասխանությունների: Կան նաև նման անհամապատասխանություններ զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան աշխատանքային պլանի միջև:

Ինչ վերաբերում է մասնավորապես 2023 թ. բյուջեի, տարեկան աշխատանքային պլանի դիտարկումների արդյունքներին, ապա այն թույլ է տալիս եզրակացնելու, որ կան ցուցանիշի փաստացի շեղումներ ունեցող բազմաթիվ ծրագրեր, ընդ որում՝ հետաքրքրական է այն փաստը, որ որոշ դեպքերում շեղման չափը ցուցանիշի թիրախային արժեքի գերակշիռ մասն է: Մտահոգիչ է այն փաստը, որ 2023 թ. ևս թերակատարվել են նույնիսկ սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված որոշ ծրագրեր:

Այսպիսով՝ ամփոփելով փաստենք, որ դեռևս լրջագույն անելիքներ կան թե՛ զարգացման ծրագրերում խնդիրների, նպատակների և թիրախների սահմանման ուղղությամբ, թե՛ դրանց կատարման ապահովման ուղղությամբ: Այս առումով հատկապես կարևորվում են բոլոր ցուցանիշների, դրանց նպատակային արժեքների, վերջիններիս ապահովման համար անհրաժեշտ գործողությունների և ռեսուրսների առավել հիմնավորված, փաստարկված սահմանումը, քանի որ կատարողականի նույնիսկ բարձր ցուցանիշները դեռևս չեն երաշխավորում սահմանված նպատակների ձեռքբերում և խնդիրների լուծում, եթե ճշգրիտ սահմանված չեն դրանց հաշվարկման և գնահատման ցուցանիշները: Այս խնդիրների արձանագրումը և դրանց կարգավորման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկումը չափազանց կարևոր է առավել գրագետ, նպատակային և արդյունքային պլանավորում և գնահատում իրականացնելու տեսանկյունից:

Պետք է փաստել նաև այն հանգամանքը, որ կատարողականների նման ցուցանիշներ գրանցվել են նույնիսկ տարեկան ճշտված բյուջեի գնահատումներ իրականացնելիս: Իհարկե, պատկերն առավել մտահոգիչ կլիներ, եթե

կատարողականի գնահատումն իրականացվեր ոչ թե ճշտված, այլ պլանավորված՝ սկզբնական ցուցանիշների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N40-Ա որոշում, «2023 թ. Գյումրի համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ» հաշվետվություն. 15 մարտ 2024:
2. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում, «Հաշվետվություն համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
3. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում, «Հաշվետվություն համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ (02/10/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
4. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N39-Ա որոշում, «Հաշվետվություն համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների (02/01/23-31/12/23 թ. ժամանակահատվածի համար)». 15 մարտ 2024:
5. Բրոուս ընդ Ասատրյանս ՍՊԸ. «Բյուջեի կատարման հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն». 02 մարտ 2024 թ.:
6. ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի. N 266-Ն որոշում, «Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջե». 26 դեկտ. 2022 թ.:

WORKS CITED

1. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani. N40-A oroshum. 15 mart 2024 «2023t'. Gyumri hamaynqi tarekan ashxatanqayin plani irakanacman veraberyal» hashvetvut'yun [Report on the Implementation of the Annual Work Plan of the Gyumri Community in 2023]. (in Armenian).
2. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei c'axseri katarman veraberyal (02/10/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar ["Report on the Execution of the Community Budget Expenses (for the period 02/10/23-31/12/23]. (in Armenian).
3. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei ekamutneri katarman veraberyal (02/10/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar) [Report on the Implementation of Income of the Municipal Budget (for the period 10.02.23-31.12.23]. (in Armenian).
4. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N39-A oroshum. 15 mart 2024 «Hashvetvut'yun hamaynqi byujei havelurdi o'gtagorc'man ughghut'yunneri kam pakasurdi (Deficiti) finansavorman aghbyurneri (02/01/23-31/12/23t'. jhamanakahatvac'i hamar). ["Report on the Directions of Using the Surplus of the Community Budget or Sources of Financing the Deficit (for the period 02/01/23-31/12/23]. (in Armenian).
5. Qrou y'nd Asatryans SPY', 02 mart 2024t'. Byujei katarman hashvetvut'yunner ev ankax auditori ezrakacut'yun. ["Budget Execution Reports and Independent Auditor's Report"]. (in Armenian).
6. HH Shiraki marzi Gyumri hamaynqi avagani, N266-N oroshum 26 dekt. 2022t'. «Shiraki marzi Gyumri hamaynqi 2023 t'vakani byuje»: ["2023 Budget of Gyumri Community of Shirak marz]. (in Armenian).

IN THE SPIRIT OF EVALUATING BUDGET IMPLEMENTATION OF GYUMRI COMMUNITY, 2023: FACTS AND CONCLUSIONS

LUSYA GALOYAN

*Armenian State University of Economics, Gyumri Branch,
Department of General Economics, General Economics and Natural Sciences,
Ph.D. in Economics, Associate Professor,
Gyumri, the Republic of Armenia*

The article aims at evaluating the annual financial state of Gyumri Community in 2023 and identifying existing issues. The issues identified in the article are primarily associated with the comparative analysis of the planned budgetary indicators and the evaluation of their implementation. This approach enabled the identification of existing challenges and the formulation of conclusions based on these findings.

The methods of analysis and comparison were employed primarily for the purpose of conducting the aforementioned study and evaluations.

Thus the study demonstrates that a considerable number of projects exhibit absolute deviations in the index. It is noteworthy that, in certain instances, the magnitude of the deviation constitutes a significant proportion of the target value of the index.

Consequently, there is a significant undertaking to be carried out in the identification and assessment of problems, goals and objectives within development projects, as well as in the assurance of their implementation. In this regard, it is particularly important to carry out budget planning in a sound, reasoned manner, particularly in terms of indicators and the determination of their target values, since even high-performance indicators often still do not guarantee the achievement of objectives and the solution of problems if the indicators for their calculation and evaluation are not precisely defined. Fixing these problems and taking the necessary steps to address them is extremely important in terms of more competent, targeted and efficient planning and evaluation.

Key words: *municipal budget, annual work plan, municipal budget revenues, municipal budget expenditures, municipal budget deficit, municipal budget surplus, budget execution.*

ОЦЕНКА ИСПОЛНЕНИЯ БЮДЖЕТА ОБЩИНЫ ГЮМРИ В 2023 ГОДУ: ФАКТЫ И ВЫВОДЫ

ЛЮСЯ ГАЛОЯН

*доцент кафедры общей экономики и естественных наук факультета общей
экономики Гюмрийского филиала Государственного экономического
университета Армении, кандидат экономических наук,
г. Гюмри, Республика Армения*

Цель статьи – оценить состояние выполнения годового финансового плана общины Гюмри на 2023 год и выявить существующие проблемы.

Вопросы, поднятые в статье, главным образом касаются сравнительного анализа плановых и уточненных показателей бюджета, а также оценки их фактического выполнения, что позволило выявить существующие проблемы и сделать выводы на их основе.

Для проведения указанных анализов и оценок в основном использовались методы анализа и сравнения.

Таким образом, исследование выявляет, что, как по доходным, так и по расходным статьям, имеются значительные недовыполнения, а также множество программ, по которым показатели фактически отклоняются от целевых значений. Интересен также тот факт, что в некоторых случаях степень отклонения составляет большую часть целевого значения.

Следовательно, существуют серьезные задачи как по определению и оценке проблем, целей и целевых показателей в программах развития, так и по обеспечению их выполнения. В этом отношении особенно важно обоснованное и аргументированное бюджетное планирование, особенно в части определения показателей и их целевых значений, поскольку даже высокие показатели выполнения зачастую не гарантируют достижения поставленных целей и решения задач, если показатели их расчета и оценки не определены точно. Фиксация этих проблем и принятие необходимых мер для их устранения чрезвычайно важны с точки зрения более грамотного, целенаправленного и результативного планирования и оценки.

Ключевые слова: *муниципальный бюджет, годовой рабочий план, доходы муниципального бюджета, расходы муниципального бюджета, дефицит бюджета, избыток бюджета, исполнение бюджета.*